ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻԱՋԱԿՑՄԱՆԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«11» հուլիսի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

Մ. Անանյան

ԳԲԽ-72/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 24.06.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Խաչպար» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 24.06.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել

է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընկերությունը ներկայացված բողոքով տեղեկացրել է, որ «Խաչպար» ՍՊԸ-ն մասնակցել է վերոհիշյալ Ընթացակարգին:

Ընկերությունը տեղեկացրել է նաև, որ «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով ընթացակարգի հրավերը հրապարակվել է ընթացակարգի հանձնաժողովի 2016թ. մայիսի 25-ի թիվ 1 որոշման համաձայն:

Ընկերությունը բողոքով տեղեկացրել է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.06.2016թ. թիվ 4 արձանագրության 3-րդ կետով մերժել է «Խաչպար» ՍՊԸ-ի հայտով ներկայացված 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, և 53-րդ չափաբաժինները՝ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսվածին ոչ համարժեք լինելու հիմնավորմամբ:

Ընկերությունը ներկայացված բողոքով նշել է, որ 2016թ. մայիսի 27-ին «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գիծ և հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, և 53-րդ չափաբաժիններում Պատվիրատուի կողմից կազմված գնման առարկաների տեխնիկական և որակական բնութագրերում նշված են գնման առարկաների անվանումները ունեցող կոնկրե՛տ արտադրողի՝ տվյալ բրենդային անվանում ունեցող նյութերի կոնկրե՛տ տվյալները, ինչով բացառում են մեկից ավելի մասնակիցների մասնակցության հնարավորությունը տվյալ չափաբաժիններին՝ առաջացնելով չհիմնավորված խոչընդոտներ մասնակիցների հավասար մրցակցության համար:

Ընկերությունը տեղեկացրել է, որ Պատվիրատուն «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով հրավերի 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, և 53-րդ չափաբաժինների գնման առարկաների տեխնիկական բնութագրերը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտումներով կազմելով՝ դրանով իսկ իր համար հիմքեր է ստեղծում հայտերի գնահատման ժամանակ, բացի մեկ մասնակցից, մյուս բոլոր հնարավոր մասնակիցների ներկայացրած հայտերը մերժելու՝ տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու հիմքով:

«Խաչպար» ՍՊԸ-ն տեղեկացրել է նաև, որ 2016թ. մայիսի 30-ին «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը դիմում է ներկայացրել Ընթացակարգի գնահատող

հանձնաժողովին, մատնանշելով թույլ տրված օրինախախտումները, և խնդրելով 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, և 53-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերում անհրաժեշտ փոփոխություններ կատարել և այդ մասին սահմանված կարգով հայտարարություն հրապարակել, որից հետո 2016թ. մայիսի 31-ին «Խաչպար» ՍՊԸ-ն ստանում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.05.2016թ. թիվ 2 արձանագրությունը, որտեղ նշված է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գտնում է, որ Ընկերության կողմից 2016թ. մայիսի 30-ի դիմումով ներկայացված պահանջը հիմնավոր չէ և հրավերի փոփոխության անհրաժեշտություն առկա չէ:

Ընկերությունը, բողոքում մեջբերել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 24, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 4-րդ, Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջները:

Ընկերությունը, մեջբերելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդված 1-ին մասով սահմանված պահանջը, բողոքարկման խորհրդին խնդրել է.

1: կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել կողմերի միջև պայմանագրի կնքման գործընթացը թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, 53-րդ չափաբաժինների մասով,

2. դադարեցնել 10.06.2016թ. «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետով՝ թիվ 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, 53-րդ չափաբաժինների մասով, «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը,

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 30.06.2016թ. ժամը 16:30-ին և 11.07.2016թ. ժամը 16:00-ին ԳԲԽ-72/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ «Խաչպար» ՍՊԸ-ի տնօրենը բողոքը պնդեց ամբողջությամբ:

01.06.2016թ. ի լրումն 24.06.2016թ. ներկայացված բողոքի «Խաչպար» ՍՊԸ-ն գնումների բողոքարկման խորհրդին է ներկայացրել Ընթացակարգի 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ, 53-րդ և 54-րդ չափաբաժիներին մասնակցելու հայտ ներկայացրած

մասնակիցների գնային առաջարկները, որտեղ նշված համարժեք գման առարկաները մերժվել են Պատվիրատուի կողմից և հաղթող են ճանաչվել միայն այն մասնակիցները, որոնց ապրանքների անվանումները նույնական են եղել Պատվիրատուի հրավերի տեխնիկական բնութագրում նշված միայն տվյալ կոնկրե՛տ արտադրողի միայն տվյալ բրենդային անվանման հետ:

2. «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) «Խաչպար» ՍՊԸ-ի 24.06.2016թ. բողոքի վերաբերյալ 29.06.2016թ. թիվ 08-205 գրությամբ Կենտրոն է ներկայացրել իր դիրքորոշումը և Ընթացակարգին վերաբերող բոլոր անհարժեշտ փաստաթղթերի պատճենները:

Պատվիրատուն գրությամբ հայտնել է, որ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ 27.05.2016թ. Ընկերությունը ահազանգել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի թեժ գծին՝ բողոքարկելով Ընթացակարգի հրավերի 2, 50, 51, 52, 53 և 54-րդ չափաբաժիններով ներառված ախտահանող և լվացող հեղուկների տեխնիկական բնութագրերի կազմման համապատասխանությունը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, այնուհետև 30.05.2016թ. Ընկերությունը դիմել է նաև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ Ընթացակարգի հրավերում փոփոխություն կատարելու խնդրանքով, որի հիման վրա գնահատող հանձնաժողովը կազմակերպել է արտահերթ նիստ, որի արդյունքում գնահատող հանձնաժողովի 30.05.2016թ. թիվ 2 արձանագրության համաձայն՝ կայացվել է որոշում, ըստ որի «Խաչպար» ՍՊԸ-ի դիմումով ներկայացված պահանջը հիմնավոր չէ և հրավերի փոփոխության անհրաժեշտություն առկա չէ, մասնավորապես՝ ինչ վերաբերվում է հրավերով նախատեսված ապրանքների

առևտրային անվանումներին կատարված հղումներին, ապա տեխնիկական բնութագրերի այլ պայմաններով սահմանված է հետևյալը. «Բնութագրերում առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին կատարված հղումների հետ միասին հասկանալ «կամ համարժեք» բառերը»:

Պատվիրատուն նշել է նաև, որ «Խաչպար» ՍՊԸ-ն մասնակցել է Ընթացակարգի թիվ 2, 9, 10, 12, 13, 14, 31, 41, 43, 45, 46, 48, 49, 50, 51, 52, 53, 61, 63 և 71-րդ չափաբաժիններին, որի արդյունքում՝ գնահատող հանձնաժողովի 10.06.2016թ. թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը 2, 14, 41, 43, 45, 46, 50, 51, 52 և 53-րդ չափաբաժինների մասով մերժվել է՝ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսվածին ոչ համարժեք լինելու հիմնավորմամբ, 12 և 13-րդ չափաբաժիններով՝ առաջարկված գները նախահաշվային գներին գերազանցելու հիմանավորմամբ, իսկ 9, 31, 61, 63 և 71-րդ չափաբաժիններով Ընկերությունը ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից, որից հետո հաջորդող աշխատանքային օրը 13.06.2016թ. էլեկտրոնային եղանակով ընկերությունը ծանուցվել է նիստի արդյունքների մասին և սահմանված կարգով պահանջվել է ներկայացնել որակավորումը հիմնավորող, ինչպես նաև հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր, սակայն «Խաչպար» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել որակավորումը հիմանվորող փաստաթղթերը, ինչի հիման վրա էլ գնահատող հանձնաժողովը 17.06.2016թ. թիվ 5 արձանագրության համաձայն՝ մերժել է Ընկերության հայտը:

Ինչ վերաբերվում է բողոքի առարկա հանդիսացող 2, 50, 51, 52 և 53-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերի կազմմանը, ապա Պատվիրատուն գրությամբ տեղեկացրել է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը տվյալ չափաբաժիններով մերժվել է, քանի որ Ընկերության կողմից առաջարկված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն բավարարել հրավերի նվազագույն պահանջներին, ինչպես նաև հրավերով նախատեսված և հայտով առաջարկված ապրանքների տեխնիկական բնութագրերի տարբերությունները, իրենց բաղադրություններով և կիրառման մեթոդով, էականորեն տարբեր են:

Պատվիրատուն գրությամբ տեղեկացրել է նաև, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից հաշվարկված այսպես կոչված «Տնտեսումները» չի կարելի դիտարկել զուտ

թվաբանական տեսանկյունից, նախ անհրաժեշտ է հաշվի առնել Պատվիրատուի կարիքը, առողջապահական ոլորտում գործող նորմատիվ փաստաթղթերը, անորակ կամ տվյալ կարիքին չբավարարող ապրանքների կիրառման դեպքում առաջացող գերծախսերը, աշխատանքային անհարմարավետությունը և հավանական սխալները՝ նույն տարածքում նույն նյութից ստացված տարբեր դոզաներով աշխատանքային հեղուկների միաժամանակյա կիրառման դեպքում ինֆեկցիաների առաջացման հավանականությունը և վնասակարությունը, հետո նոր հաշվել ֆինանսական միջոցների տարբերությունները: Պատվիրատուն գրությամբ նշել է, որ ներկայումս Հայաստանի Հանրապետությունում չկա որևիցե մի իրավական ակտ, որով արգելվում է այս կամ այն ընկերությանը ներկայացնել, ներկրել, վաճառել սույն ընթացակարգում ներառված որևէ ախտահանիչ և լվացող նյութ:

Պատվիրատուն գրությամբ նշել է, նաև որ 53-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկան, որը նախորդ տարիներին «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի համար ներկրում և մատակարարում էր «Մագտոնի» ՍՊԸ-ն սույն ընթացակարգում զբաղեցրել է հաջորդ տեղ, իսկ հաղթող է ճանաչվել «Լեյկոալեքս» ՍՊԸ-ն, ինչը և ապացուցում է այն փաստը, որ Ընթացակարգում ներառված ապրանքների տեխնիկական բնութագրերը միայն մեկ մասնակցի կողմից ներկայացմանը չեն ուղղված, այլ բխում են Պատվիրատուի կարիքից:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն նշել է, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր չէ և ենթակա չէ բավարարման:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 11.07.2016թ. ժամը 16:00-ին ԳԲԽ-72/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը տեղեկացրեց, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը 2, 14, 41, 43, 45, 46, 50, 51, 52 և 53-րդ չափաբաժինների մասով մերժել է՝ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսվածին ոչ համարժեք լինելու հիմնավորմամբ, հիմք ընդունելով՝ 1-ին փուլում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից հայտի հետ միասին ներկայացված գնային առաջարկը և «Ինտերսեն Պլյուս» ախտահանող նյութեր արտադրող ընկերության արտադրանքը ներկայացնող տեղեկատուն:

3. ԳԲԽ-72/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-72/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների, Ընթացակարգի 2, 9, 10, 12, 13, 14, 31, 41, 43, 45, 46, 48, 49, 50, 51, 52, 53, 61, 63 և 71-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Խաչպար» ՍՊԸ-ն:

2. Հրավերի 4.3 կետի «զ» ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը, տեխնիկական բնութագրերը...:

3. Ընթացակարգի հրավերի 7-րդ մասի 7.3 կետով սահմանվել է հետևյալ պահանջը՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը,

4. Ընթացակարգի հրավերի 7.4 կետով սահմանվել է հետևյալը՝ եթե սույն հրավերի 7.3 կետով սահմանված ժամկետում Մասնակիցը շտկում է արձանագրված

անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում:

5. Ընթացակարգի հրավերի 7.5 կետի 2-րդ ենթակետով սահմանվել է հետևյալը՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 4.3 կետի «զ» ենթակետով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

6. «Խաչպար» ՍՊԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի հետ միասին 1-ին փուլում Պատվիրատուին է ներկայացրել նաև «Ինտերսեն Պլյուս» ախտահանող նյութեր արտադրող ընկերության արտադրանքը ներկայացնող տեղեկատու:

7. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.06.2016թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ընկերության հայտը 2, 14, 41, 43, 45, 46, 50, 51, 52 և 53-րդ չափաբաժինների մասով մերժել է՝ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսվածին ոչ համարժեք լինելու հիմնավորմամբ:

8. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 11.07.2016թ. ժամը 16:00-ին ԳԲԽ-72/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչը տեղեկացրեց, որ Ընթացակարգի գնահատող հանջնաժողովը «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը 2, 14, 41, 43, 45, 46, 50, 51, 52 և 53-րդ չափաբաժինների մասով մերժել է՝ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսվածին ոչ համարժեք լինելու հիմնավորմամբ, հիմք ընդունելով՝ 1-ին փուլում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից հայտի հետ միասին ներկայացված գնային առաջարկը և «Ինտերսեն Պլյուս» ախտահանող նյութեր արտադրող ընկերության արտադրանքը ներկայացնող տեղեկատուն:

4. ԳԲԽ-72/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 24.06.2016թ. ներկայացրած բողոքը, «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի 29.06.2016թ. թիվ 08-205 գրությունը և կից փաստաթղթերը, «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կարիքների համար նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ նաև՝ Հրավեր), «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), հայտնում է հետևյալը.

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև իր կողմից հաստատված հայտարարություն: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին.

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ

եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, Կենտրոնը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 10.06.2016թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժելով՝ ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսվածին ոչ համարժեք լինելու հիմնավորմամբ, հիմք ընդունելով՝ 1-ին փուլում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից հայտի հետ միասին ներկայացված գնային առաջարկը և «Ինտերսեն Պլյուս» ախտահանող նյութեր արտադրող ընկերության արտադրանքը ներկայացնող տեղեկատուն, գործել է ոչ իրավաչափ, քանի որ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի անհամապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին կարող էր գնահատվել միայն Ընկերությանը 1-ին տեղ զբաղեցնող ճանաչելու, ինչպես նաև Ընկերության կողմից առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնելու դեպքում: Ընդ որում Պատվիրատուի կողմից անհամապատասխանություն արձանագրելու դեպքում՝ Կարգի 51-րդ կետով սահմանված կարգով, հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ Պատվիրատուի կողմից չեն պահպանվել՝ Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով, Կարգի 51-րդ կետով և Կարգի 52-րդ կետով սահմանված պահանջները:

Հետևաբար, հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկում ենք «Խաչպար» ՍՊԸ-ի՝ «Նորք-Մարաշ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների և նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՆՄԲԿ-ՇՀԱՊՁԲ-16/18» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.06.2016թ. թիվ 4 արձանագրության 3-րդ կետով՝ «Խաչպար» ՍՊԸ-ի հայտը 2-րդ, 50-րդ, 51-րդ, 52-րդ և 53-րդ չափաբաժինների մասով մերժելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ 24.06.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետի տեղակալ	Հ. Այունց
Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝	Հ. Ենգոյան
Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ	Մ.Կատվալյան
Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-72/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝	Տ. Գևորգյան